Հավելված 2

Հաստատված է
Վաղարշապատ համայնքի ղեկավարի
2025թ. հուլիսի 30-ի N806-Ա որոշմամբ

Կ Ա Ր Գ

Վաղարշապատ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի գործունեության

1. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով.
2. Հանձնաժողովի հերթական նիստերը հրավիրում է նախագահը.
3. Հանձնաժողովի հերթական նիստերը հրավիրվում են ՄԲ գործընթացը մեկնարկելիս և յուրաքանչյուր փուլի ավարտին.
4. Հանձնաժողովի հերթական նիստերի նպատակն է ապահովել ՄԲ գործընթացի հերթական փուլի մեկնարկը և ամփոփել նախորդ փուլի արդյունքները.
5. Հանձնաժողովի յուրաքանչյուր հերթական նիստում ամփոփվում և հաստատվում են նախորդ փուլի արդյունքները և հաշվետվությունները, սահմանվում և հստակեցվում են մեկնարկող փուլում հանձնաժողովի կողմից իրականացվող միջոցառումները և հանձնաժողովի անդամների/աշխատանքային խմբերի պատասխանատվությունը.
6. Հանձնաժողովի արտահերթ նիստ հրավիրում է նախագահը կամ հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի մեկ երրորդը.
7. Հանձնաժողովի նիստերը բաց են և դրանց խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել համայնքի բնակիչները, ինչպես նաև օրենքով չարգելված այլ շահառուներ.
8. Հանձնաժողովն իրավասու է, եթե նիստին ներկայացած է անդամների ընդհանուր թվի կեսից ավելին.
9. Որոշումներն ընդունվում են հանձնաժողով նիստի մասնակիցների ձայների մեծամասնությամբ, բայց անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդով.
10. Ձայների հավասար բաժանման դեպքում որոշիչ է նախագահի ձայնը.
11. Որոշումները ստորագրում են նիստին ներկա անդամները.
12. Հանձնաժողովի աշխատանքների ադմինիստրատիվ և կազմակերպչական մասը, ինչպես նաև նիստերի արձանագրումն ապահովում է հանձնաժողովի քարտուղարը.
13. Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նիստին մասնակից բոլոր անդամները, հանձնաժողովի նիստերի արձանագրությունները հրապարակվում են կայքում.
14. Հանձնաժողովի աշխատանքային խմբերի գործունեությունը կազմակերպվում է խորհրդակցությունների և քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կազմվում են զեկուցագրեր.
15. Զեկուցագրերը ներկայացվում են հանձնաժողովի նախագահին և քննարկվում են հանձնաժողովի նիստում.
16. Հանձնաժողովի նախագահի բացակայության ժամանակ նիստերը հրավիրում և վարում է նախագահի տեղակալը:

Վաղարշապատ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողովի գործառույթները

Հանձնաժողովը՝

1) կազմակերպում և համակարգում է մասնակցային բյուջետավորման գործընթացը,
2) կազմակերպում է գործընթացի մասին համայնքի բնակչության իրազեկմանն ուղղված տարբեր միջոցառումներ՝ համագործակցելով լրատվամիջոցների հետ,
3) համագործակցում է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ,
4) իր կազմից ձևավորում է տարբեր աշխատանքային խմբեր,
5) իրականացնում է գործընթացի համար անհրաժեշտ ադմինիստրատիվ և լոգիստիկ աշխատանքներ, նախապատրաստում է տարբեր նյութեր և փաստաթղթեր, մշակում կամ համաձայնեցնում է տեղեկատվական նյութերի բովանդակությունը՝ հրապարակումների, հոդվածների, հարցազրույցների, ներկայացումների, բուկլետների, պաստառների, տեսանյութերի թեմաները,
6) համակարգող և խորհրդատվական աջակցություն է տրամադրում քաղաքացիներին և նախաձեռնող խմբերին առաջարկների պատրաստման ներկայացման գործընթացում,
7) կազմակերպում է առաջարկների ընդունման և քվեարկության էլեկտրոնային համակարգի պատշաճ գործունեությունը,
8) կազմակերպում է առաջարկների այլընտրանքային տարբերակով ընդունման և քվեարկության գործընթացը,
9) գնահատում է քաղաքացիների և նախաձեռնող խմբերի կողմից ներկայացված առաջարկների հայտերը,
10) կազմում է քվեարկության համար պատրաստված առաջարկների ցանկը՝ համապատասխան հիմնավորումներով,
11) կազմում է սահմանված չափանիշներին չհամապատասխանող առաջարկների ցանկը՝ համապատասխան հիմնավորումներով,
12) ամփոփում է քվեարկության արդյունքները,
13) անհրաժեշտության դեպքում համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում առաջարկություն՝ գործընթացի փուլերի ժամկետների փոփոխության վերաբերյալ,
14) կազմում և համայնքի ղեկավարին է ներկայացնում գործընթացի վերաբերյալ ընթացիկ և տարեկան հաշվետվություններ և ապահովում է հաշվետվությունների հրապարակումը կայքում: